Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 6

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման
խորհրդի արտահերթ նիստի

ք. Երևան 29 նոյեմբերի 2019թ.
Ժամը 17[00]

Մասնակցում էին՝

Է. Գրիգորյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Ա. Ասոյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Ավանեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա.Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ս. Գալյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Գ. Բալումյան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու
Ս. Ադամյան	«Բնապահպանական հասարակական միություն» հասարակական կազմակերպություն

Բացակա էին՝

Ա. Ամիրխանյան	Հայաստանի ամերիկյան համալսարան, Յակոբեան բնապահպանական կենտրոնի տնօրեն
Պ. Խաչատրյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն

Հրավիրված էին՝

Վ. Ավետիսյան	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար

Գ. Ներսիսյան	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող խորհրդական
Բ. Նահապետյան	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ
Ա. Մովսիսյան	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչության պետ
Ն. Աղաբաբյան	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի պետ
Ռ. Սեխլեյան	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչության ռիսկի վերլուծությունների բաժնի պետ
Ս. Ղազարյան	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության գլխավոր մասնագետ (խորհրդի քարտուղար)

10 . 10 . 2019թ . էլեկտրոնային քվեարկությամբ կայացած նիստի ընթացքում հանձնարարկաներ չեն տրվել:

ՕՐԱԿԱՐԳ

- Հարց 1 –

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում իրականացվելիք ստուգումների տարեկան ծրագիրը հաստատելու մասին:

- Հարց 2-

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2020 թվականի տարեկան գործունեության ծրագիրը հաստատելու մասին:

- Հարց 3-

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության գործունեության 2020 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին:

Խորհուրդը միաձայն հաստատեց օրակարգը:

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար՝ Վ.Ավետիսյանը:

Կառավարման խորհրդի նախագահ՝ Է. Գրիգորյանն առաջարկեց քննարկել ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների քանակը նվազեցնելու հարցը, քանի որ այլ պետական մարմինների կողմից ստացված բնապահպանական իրավախախտումների վերաբերյալ հաղորդումների, քաղաքացիներից ստացված դիմում-բողոքների հիման վրա իրականացվող ստուգումների քանակը բազմաթիվ է և մի քանի անգամ գերազանցում է տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների քանակին:

Վ. Տերտերյանն առաջարկեց տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում իրականացվելիք ստուգումների տարեկան ծրագրում ներառված տնտեսավարող սուբյեկտներին դասակարգել ըստ ոլորտների՝ թիրախավորել առավել ռիսկային տնտեսավորող սուբյեկտներին:

Ս.Ադամյանը տալով իր համաձայնությունը Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում իրականացվելիք ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների ցանկի կրճատմանը, առաջարկեց ցանկում ներառել կենդանական հավաքածուների ներկրմամբ զբաղվող ընկերություններին, նշելով որ Տեսչական մարմինը վերոհիշյալ ընկերություններում ստուգումներն իրականացնում է գրավոր դիմում-բողոքների հիման վրա:

Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար՝ Ա. Ասոյանն արձագանքելով Ս. Ադամյանին նշեց, որ ստուգումների տարեկան ծրագրում ներառված են բացառապես այն տնտեսավարողները, որոնք համապատասխանում են ՀՀ Կառավարության 2019թ. օգոստոսի 22-ի թիվ 1125-Ն որոշմամբ՝ ռիսկի հիման վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությանը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագրին: Միաժամանակ, հաշվի առնելով ՀՀ վարչապետի կողմից ստացված հանձնարարականներով, պետական մարմիններից ստացված գրություններով, ինչպես նաև քրեական գործերով պայմանավորված առաջիկա ստուգումների մեծաքանակությունը՝ Ա.Ասոյանը համաձայնվեց այս փուլում պլանային ստուգումների թիվը կրճատելու առաջարկին՝ ըստ անհրաժեշտության հետագայում վերանայելու պայմանով:

Քննարկման արդյունքում հանձնարարվեց 1 օրյա ժամկետում վերանայել և կրճատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում իրականացվելիք ստուգումների տարեկան ծրագրով նախատեսվող

թվով 217 տնտեսավարողների ցանկը նվազեցնելով և համապատասխանեցնելով տեսչական մարմնի իրական հնարավորություններին:

Օրակարգի 2-րդ հարցը նույնպես ներկայացրեց Վ.Ավետիսյանը:

Քննարկման արդյունքում հանձնարարվեց 1 օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2020 թվականի տարեկան գործունեության ծրագրում արտացոլել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում իրականացվելիք ստուգումների տարեկան ծրագրի վերանայված ցանկը:

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց Տեսչական մարմին որակի ապահովման վարչության պետ՝ Բ.Նահապետյանը:

Ա. Ասոյանն նշեց, որ ներկայացված նախագծում առկա են բազմաթիվ խնդրահարույց կետեր և այն լուրջ վերամշակման ու լրացման կարիք ունի:

Խորհուրդը, հաշվի առնելով Ա. Ասոյանի նկատառումները, որոշեց հետաձգել ծրագրի հաստատման հարցը:

Խորհուրդը որոշեց հանձնարարել Որակի ապահովման վարչության պետ Բ.Նահապետյանին լրամշակել ծրագիրը՝ համաձայնեցնելով այն Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ և լրամշակված ծրագիրը մինչև 2019թ. դեկտեմբերի երրորդ տասնօրյակ ներկայացնել խորհրդի հաստատմանը:

Քննարկելով ներկայացված հարցերը Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում իրականացվելիք ստուգումների տարեկան ծրագիրը:

Միաձայն

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2020 թվականի տարեկան գործունեության ծրագիրը:

Միաձայն

3. Հանձնարարել Որակի ապահովման ստորաբաժանմանը լրամշակել ծրագիրը՝ համաձայնեցնելով այն Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ և լրամշակված ծրագիրը մինչև 2019թ. դեկտեմբերի երրորդ տասնօրյակ ներկայացնել խորհրդի հաստատմանը:

7 կողմ, 1 դեմ

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ) Է. Գրիգորյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության գլխավոր մասնագետ (խորհրդի քարտուղար) Ս. Ղազարյան